ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/49

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությամբ «Իսատիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2785 գրության հիման վրա, 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Իսատիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Իսատիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 30.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/15797-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Իսատիս» ՍՊԸ-ին:

Սակայն Ընկերության կողմից գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.09.2017թ. ժամը 11:50-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության ներկայացուցիչը չի ապահովել իր մասնակցությունը Խորհրդի որոշմամբ նիստը հետաձգվել է՝ պատշաճ քննություն իրականացնելու համար:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.09.2017թ. ժամը 11:20-ի հաջորդ նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է, որ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին և Ընկերության կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, այնուհետև Ընկերությունը ծանուցվել է, որ ներկայացրած որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայել է առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, և առաջարկվել է Ընկերությանը շտկել անհամապատասխանությունը և տրվել է մեկօրյա ժամկետ: Սակայն տեխնիկական պատճառներով պահանջվող փաստաթուղթը Ընկերության կողմից ուղարկվել է մեկ օր ուշացումով:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկ-ները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2785 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Շինանյութի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում մի շարք կազմակերպությունների կողմից խախտվել են ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ «Իսատիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ (բացակայում էին առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը): Մասնակցին առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը, սակայն վերջինս սահմանված կարգով շտկում չի իրականացրել (շտկված փաստաթղթերը ներկայացրել է սահմանված ժամկետի խախտմամբ): Հաշվի առնելով նշված հանգամանքը մասնակցի հայտը հանձնաժողովի կողմից մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.09.2017թ. ժամը 10:50-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.09.2017թ. ժամը 11:20-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/49 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/49 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Շինանյութի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Իսատիս» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.07.2017թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ մի շարք կազմակերպությունների, այդ թվում նաև «Իսատիս» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում բացակայում են առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը:

3. Պատվիրատուն 04.07.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ ուսումնասիրվել են «Իսատիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում բացակայում են առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը: Ուստի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ շտկված տարբերակը ուղարկել g.tovmasyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.07.2017թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ «Իսատիս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող փաստաթուղթը (ներկայացրել է միայն 07.07.2017թ.): Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է «Իսատիս» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով << ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությունը, << պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2785 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ ***հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային

օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկաացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված ***փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 7.3 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 7.4 կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 7.3 կետով սահմանված ժամկետում Մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Շինանյութի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Իսատիս» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.07.2017թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ «Իսատիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում բացակայում են առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը:

Պատվիրատուն 04.07.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ ուսումնասիրվել են «Իսատիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում բացակայում են առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը: Ուստի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ շտկված տարբերակը ուղարկել g.tovmasyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.07.2017թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ «Իսատիս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող փաստաթուղթը (ներկայացրել է միայն 07.07.2017թ.): Ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է «Իսատիս» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Խորհուրդն արձանագրում է, որ 19.09.2017թ. ժամը 11:20-ին Խորհրդում կայացած նիստի ժամանակ «Իսատիս» ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է, որ Ընկերության կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, այնուհետև Ընկերությունը ծանուցվել է, որ ներկայացրած որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայել է առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, որից հետո անհամապատասխանությունը շտկելու նպատակով տրվել է մեկ օրյա ժամկետ, սակայն տեխնիկական պատճառներով պահանջվող փաստաթուղթը Ընկերության կողմից ուղարկվել է սահմանված ժամկետից մեկ օր ուշացումով:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Իսատիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերը նշված հիմքերը, արձանագրում է, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, ***g.tovmasyan@mil.am*** էլեկտրոնային փոստի հասցեից ***04.07.2017թ.*** ծանուցել է «Իսատիս» ՍՊԸ-ին, որպեսզի վերջինս շտկի հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը, մինչդեռ՝ «Իսատիս» ՍՊԸ-ն Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ սահմանված ժամկետում և կարգով չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպես, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Իսատիս» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում մեկ անգամ է խախտել ստանձնած պարտավորությունը,

հետևաբար Խորհուրդը գտնում է, որ թույլ տրված խախտումը դեռևս բավարար հիմք չէ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված կարգով Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությամբ «Իսատիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00098367) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ